ՀԱՍՏԱՏՈՒՄ Է՝
ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ՝

Ն. Զաքարյան

30 ---- 2022թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՅՈ ՅԱՎՈՐՈՎԻ ԱՆՎԱՆ Հ. 131 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԴԱՍՂԵԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

VII դասարան

2022 – 2023 ՈՒՍՏԱՐԻ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Երևանի Պեյո Յավորովի անվան համար 131 հիմնական դպրոց

7-րդ դասարան

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Ասատրյան Նաիրա Արշավիրի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2022- 2023 » ուսումնական տարի

Դաստիարակչական աշխատանք		
Գործառույթները	Նպատակն ու խնդիրները	Ուղղվածությունը
1.Աշակերտի սոցիալական պաշտպանության գործառույթ	1.Դասարանական կոլեկտիվի ձևավորում	1.Քաղաքացիական պատասխանատվության ձևավորում, հարգանք երկրի պատմության և մշակույթի հանդեպ
2.Կազմակերպչական գործառույթ	2.Անհատի ձևավորմանը նպաստող, յուրաքանչյուրի անհատականությունը ողջունող և ներուժը բացահայտող միջավայրի ապահովում	2.Դասեր՝ նվիրված հայրենիքին, քաղաքին
3.Աշակերտական ինքնակառավարման խթանման գործառույթ, որը երաշխավորում է նրանց ինքնուրույնության խթանումը	3.Առողջ ապրելակերպի վարքագծի ձևավորում	3.Էքսկուրսիաներ պատմական հուշարձաններ, տեսարժան վայրեր
4.Ախտորոշման գործառույթ, որը ենթադրում է աշակերտների ելակետային մակարդակի վերհանում և շարունակական համեմատության մեջ փոփոխությունների արձանագրում	4.Դասարանում համակարգված աշխատանքի կազմակերպում	3.Վնասակար սովորույթների հանդեպ բացասական վերբերմունքի ձևավորում
6.Պլանավորման, ծրագրման գործառույթ, կանոնակարգում է մանկավարժական գործունեությունը, հեշտացնում է արդյունքների հետևողական վերահսկումը	5.Աշակերտների, աշակերտների ու մանկավարժների միջև բարյացակամ, ներդաշնակ փոխհարաբերությունների ձևավորում	4.Տարբեր խմբակների, զրույցների, բանավեճերի կազմակերպում
	6.Աշակերտների արժեքային համակարգի ձևավորում	5. Իրավական գիտակցության և հանդուրժողականության խթանում
	7.Աշակերտների ստեղծագործական, հասարակայնամետ գործունեության կազմակերպում	

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը	Նպատակը	Ուսումնական շաբաթը	Կատարման ժամկետը
	1-ին կիսամյակ		
Աշակերտական խորհուրդ	Աշակերտական խորհրդի և դասարանի ավագի ընտրություններ՝ փակ քվեարկությամբ։	2- րդ շաբաթ	
Խորհումներ ապագայի շուրջ	Հաջողակ և երջանիկ լինելու համար էական նշանակություն ունի ապագա մասնագիտության ընտրությունը և դրան ուղղված քայլերը պետք է դնել դեռևս վաղ տարիքից։ Ուստի կարևոր է հենց այս տարիքից ընտրել ապագա մասնագիտական ուղղվածությունը։	3-րդ շաբաթ	
Հայրենիքը սկսվում է ինձնից	Այժմ առավել քան երբևէ կարևոր է գնահատել հայրենիքն ու նրա առկայությունը մեր կյանքում։ Հայրենասիրությունը սկսվում է պատմությունից։ Միասին կուսումնասիրենք հայոց պատմության սև և սպիակ օրերը և զուգահեռներ կանցկացնենք ներկայիս իրավիճակի հետ։	4-րդ շաբաթ	

Ինչպես ներկայանալ նոր միջավայրում	Ամեն օր մենք նոր ծանոթություններ ենք ձեռք բերում և հայտնվում նոր միջավայրում։ Ամեն ինչ սկսվում է առաջին տպավորություն գործելուց։ Այս դասաժամի շրջանակներում կսովորենք ճիշտ տպավորություն թողնել և արժանագույն կերպով ներկայանալ նոր միջավայրին։	5-րդ շաբաթ	
Վիետնամի պատերազմը, որպես աննկուն կամքի լավագույն դրսևորում	Վիետնամցիները ապացուցեցին, որ անգամ 1 մեծ մասշտաբների զենք չունենալով հնարավոր է պատերազմել այնպիսի ռազմական հսկաների դեմ, ինչպիսիք են ֆրանսիան, Ճապոնիան և ԱՄՆ-ն և հաղթանակ տոնել։ Զուգահեռներ անցկացնել ներկայիս իրականության հետ։	6-րդ շաբաթ	
Հակահայկական քարոզչամեքենան Ադրբեջանում	Քննարկել Ադրբեջանում պետական ապարատի կողմից համակարգված հակահայկական քարոզչական թեզերի դերը ներկայիս սերնդի ատելության համատեքստում։	7-րդ շաբաթ	
Արցախա-Ադրբեջանական 44օրյա պատերազմը	Քննարկել պատերազմը և հատուկ ուշադրություն կենտրոնացնել տեղեկատվական պատերազմի առկայությանն ու նրա նշանակությանը։	10-րդ շաբաթ	
Աշխատանքային օրենսգիրք	Քննարկել ՀՀ աշխատանքային օրենսգիրքը հետագա ձախողումներից և խնդիրներից խուսափելու համար։	11-րդ շաբաթ	
Խնդիրների վերհանում	Կքննարկենք կիսամյակի ընթացքում աշակերտների կողմից վեր հանված խնդիրները։	12-րդ շաբաթ	

Առողջ ապրելակերպ	Հասարակական վայրում զգուշանալ և պահել առողջապահական կանոնները	13-րդ շաբաթ	
ՀՀ ազգային հերոսներ	Ճանաչենք մեր ազգային հերոսներին	14-րդ շաբաթ	
Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում	Կամփոփենք կիսամյակը:	15-րդ շաբաթ	
	2-րդ կիսամյակ		
<<Մենք մեր երկրի ապագա զինվորներն ենք>>	Հայրենիքի պաշտպանը հայն է Զրույց հայոց բանակի և ծառայության կարևորության մասին	1-րդ շաբաթ	
Ռազմահայրենասիրական դաստիարակություն	Զուգահեռներ անցկացնել Արցախյան ազատամարտի և 44օրյա պատերազմի միջև՝ կարևորելոց ազգի միասնականությունն ու համախմբվածությունը	2-րդ շաբաթ	
<<Մայրենի լեզվի ստեղծումը>>	Հայ մնալու կարևոր գործընթացում հայոց լեզվի առկայությունը կա և մնում է կարևորագույն գործոն…	3-րդ շաբաթ	
Արտակարգ իրավիճակներ	Ներկայացնել հնարավոր արտակարգ իրավիճակների բնութագիրն ու պատրաստվել դրանց. յուրաքանչյուրս կարողենք կյանքեր փրկել:	4-րդ շաբաթ	
Հայոց մեծ Եղեռն	Պատմական ակնարկ եղեռնի մասին.գնահատել հայրենիքի առկայությունը և երբեք չթերագնահատել թշնամու ստորությունը	5-րդ շաբաթ	
Մարտի 8	Զրույց <<Կանանց միջազգային օրը>> թեմայով Կարևորել ամբողջ մարդկության գոյության և ընտանիքի մեջ մոր դերը	6-րդ շաբաթ	
Մայիսյան հաղթանակներ	Զրույց մայիսյան հաղթանակների մասին	7-րդ շաբաթ	

<<ուժեղ լինել, նշանակում է…>>	Զրույց-քննարկում հետևյալ թեմայով	8-րդ շաբաթ	
<<ես կարծում եմ>>	Սեփական կարծիքն արտահայտելու կարևորությունը	9-րդ շաբաթ	
<<Իմ կարդացած որ գրքի հերոսն է տրպավորվել իմ մեջ>>	Զրույց այս թեմայով	10-րդ շաբաթ	
Մեր ժառանգությունը	Մշակութային-ռազմահայրենասիրական դաս հայկական մշակութային և պատմական ժառանգության մասին	11-րդ շաբաթ	
<<իմ երազանքները>>	Զրուցել աշակերտտների հետ իրենց երազանքների շուրջ, լսել յուրաքանչյուրին և հնարավորինս ուղղություն ցույց տալ	12-րդ շաբաթ	
Ուզում եմ ունենալ պետություն, որտեղ…	Զրույց-քննարկում	13-րդ շաբաթ	
Եթե ես ամենակարող լինեի, ապա	Զրույց-քննարկում	14-րդ շաբաթ	
Պետական խորհրդանիշներ	Կարևորել պետությունների անկախությունը և պետական խորհրդանիշները	15-րդ շաբաթ	
Գ.Նժդեհի գաղափարախոսությունը	Ներկայացնել ամենահզոր քաղաքական և ռազմական գործչի հայացքները	16-րդ շաբաթ	
Իմ երազանքների ապագան	Զրույց-քննարկում	17-րդ շաբաթ	
Որոշումների կայացման մեխանիզմները	Կյանքի հաջողությունները պայմանավորված են ճիշտ որոշումներ կայացնելուց	18-րդ շաբաթ	
2022թ-2023 ուսումնական տարվա ամփոփում	Մտորել բացթողումների շուրջ	19-րդ շաբաթ	